

սին: Սակայն դիտարկելի է, որ յիշատակումը չի կարող պատահական համարուել, քանի որ երկուսն էլ ինչպիսիք թագաւորազարմ սերունդներից խիստ սակաւաթիւ իշխաններ են արժանացել նման յիշատակման:

Խօխանաբերդցի այս Գրիգոր Մեծի (ինչպէս նա կոչուած է իր դասեր՝ 1215 թուակիր վիմագրում) յաջորդի մասին տեղեկութիւնը պահպանուել է Գանձասարում Նրջիս իշխանուհուն՝ 1174 թ. կանգնեցրած խաչքարի վիմագրում: Այն ժէ դարում աջից օվալաձեւ կտրուել եւ իբրեւ բարաւոր դրուել է վանքի սեղանատան յետեւի դռան վրայ: Ժամանակին Յովսէփ Օրբէլու, ապա Սեդրակ Բարխուդարեանի կողմից կիսատ է ընթերցուել (միայն 14 տող) եւ թերի վերծանութեան հետեւանքով, ըստ էութեան, թողնուել է առանց մեկնաբանութեան: 2010 թ. մարտին Հնարաւորութիւն ենք ունեցել՝ յատուկ այցելելու Գանձասար (ճարտարապետ Արմէն Մկրտչեանի հետ) եւ ուսումնասիրելու վանական շինութիւնների վերջին նորոգման ընթացքում սեղանատանից հանուած (նրա փոխարէն նոր բարաւորի քար է տեղադրուել) եւ հարաւային պարսպապատի տակ դրուած այդ խաչքարի՝ աւելի դիւրընթեռնելի դարձած բնագիրը, որը ժէ դարում միայն վերջին 5 տողաւարտներում է վնասուել (1-2-ից 5-6 տառերով): Արձանագրութիւնը 25 կարճ տողերով է՝ խաչի ստորին թեւի երկու կողմերում՝ համապատասխանաբար 9 եւ 16 տող, ամենաերկարը՝ 8 տառ (գրչանկարը տե՛ս յօդուածի վերջում): Վերծանութիւնը հետեւեալն է.

«Թիւն / ՈՒ.Գ: էր [=1174 թ.]: Վա/խտանգ տէ/ր Խաչինո / յերիտաս/արդ հաս/ակի փոխ/եցաւ ի / Ք^{իստ}ս: // Ես՝ Նրջի/ս, դուստր Հ/ասանա, թոռ/ն Աբասա թ/ագվորին, / մայր որդոցս⁴⁶, / որ Ա^{ստուծոյ} ան-

դ/ունդք կոր/ծանեց/ան, կան/գնեցի / աւար/... (1 կամ 2 տառ) / իմ մաւր/... (2 կամ 3 տառ)⁴⁷ / զի/... (4 կամ 5 տառ) / ւա/... (4 կամ 5 տառ) / եռ/... (5 կամ 6 տառ) »⁴⁸: Բնագրի սկզբում յիշատակուած հանգուցեալին տրուած «տէր Խաչինո[յ]» բնութագրմանն ուղադիր վերաբերուելու դէպքում մնացած վկայութիւնները, թոււմ է, թէ հնարաւոր չէ այլ կերպ մեկնաբանել, քան ենթադրելով, որ 1174 թ. «յերիտասարդ հասակի» վախճանուած Վախտանգը Գրիգոր Մեծի որդին ու յաջորդն է եղել, իսկ Նրջիսը՝ Գրիգորի կինը: Նա նշում է Վախտանգից բացի (ըստ ամենայնի՝ նրանից առաջ)՝ նաեւ այլ զաւակներ (կամ գոնէ մէկին) կորցրած լինելու մասին («որդոցս, որ Աստուծոյ անդունդք կործանեցան»): Նրջիսի միւս նշումից՝ «ես՝ ...թոռն Աբասա թագ[ւորին]», երեւում է, որ իր մայրը (այսինքն՝ Գրիգոր Մեծի գոքանչը, որի անունը, ցաւօք, բնագրում յիշատակուած չէ) ե-

(աւելի փոքր չափերով) «մայր» բառի վերջին Ռ տառի եւ ՈՅՍ բառաճառուածի առաջին Ո-ի վերելում:

47 Այս «մայր» բառի առաջին տառը (Մ) փորագրողն սկզբում վրիպել, ապա նկատել ու տեղաւորել է (աւելի փոքր չափերով) «իմ» բառի Մ-ի աջ ճորիզոնական ստեղծի տակ:

48 Տե՛ս Ի. Օրբելի, Бытовые рельефы на Хаченских крестных камнях XII и XIII веков. - В кн.: Ի. Օրբելի, Избранные труды, Ереван, 1963, էջ 199-203 (ըստ Բ. Ուրութեանի, ըստ Ս. Բարխուդարեանի՝ էջ 33). Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 69, N 198 (վերծանել է մինչեւ «թագվորին» բառը, աւելացրել՝ «է կանգնեցի զխաչս», ապա նշել, թէ մնացած 2-3 տողերն անընթեռնելի են). Բ. Ա. Ուրութեան, Գանձասար, Եր., 1981, էջ 149-150 (նոյնը): Վերջին 5 վնասուած տողերի առաւել հաւանական վերականգնման տարբերակը համարում ենք հետեւեալը. «...կան/գնեցի / աւար/տ / իմ մար/ս եւ / զի/մոց գա/ւա/կացս ի/եռ/ագեցոց»: Այլ վիմագրերում չենք հանդիպել «կանգնեցի աւարտ» արտայայտութեանը՝ շիրմաքար դնելու իմաստով, այն բացակայում է նաեւ ՆԲՀԼ-ում, բայց հարազատ է թուում լեզուին (տե՛ս Հայերէն բացատրական բառարան, կազմեց Ս. Տ. Մալխասեան, հտ. Ա., Եր., 1944, էջ 293):

46 Այս բառի առաջին տառերը (ՈՐԴ) փորագրողն սկզբում վրիպել, ապա նկատել ու տեղաւորել է